ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՈՒԼԻՍ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքում ուղղագրական սխալ կա:**

1) ամանորյա, առնչվել, ընդամենը, կոթնել
2) փեղկ, քողտիկ, խավիար, անհարկի
3) հեղեղատ, հեղհեղուկ, ապաշխարել, ընդհանուր
4) զեղչել, զղջալ, բանբիշ, դժխեմ

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում գծիկով:**

1) ոտքով(գլխով), ասել(խոսել), ի(հեճուկս)
2) մանր(մունր), բաց(դեղին), փոքր(ինչ)
3) ընկեր(բարեկամ), կիսատ(պռատ), ծայրից(ծայր)
4) ճեփ(ճերմակ), հականե(հանվանե), մաս(մաքուր)

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերի ընդգծված *ո*-ն է արտասանվում *օ*:**

1) ան<u>ո</u>րակ, կրծ<u>ո</u>սկր, քաջ<u>ո</u>ղդի
2) ան<u>ո</u>ղնաշար, ութ<u>ո</u>տնուկ, արջա<u>ո</u>ր
3) ան<u>ո</u>ղոշ, նրբա<u>ո</u>ճ, աղի<u>ո</u>ղորմ
4) <u>ո</u>վեէ, ան<u>ո</u>ղսալի, բարե<u>ո</u>ղջույն

4 **Ո՞ր շարքում բաղադրյալ հատուկ անվան գրության սխալ կա:**

1) Բյուզանդական կայսրություն, Փոքր Հայք, Գրիգոր Լուսավորիչ
2) Դաշտային Կիլիկիա, Հավայան կղզիներ, Հին Հունաստան
3) Ռուսաստանի Դաշնություն, Ներսես Մեծ, Մշո առաքելոց վանք
4) Բաղաբերդի կիրճ, Հյուսիսատլանտյան դաշինք, Թարգմանչաց տոն

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է *ու*-ն սղվել:**

1) ծածկոց, թաքնվել, բազկաթոռ
2) դալկանալ, կանխազգալ, փախստական
3) մածնաթան, լեզվաբան, գանգրահեր
4) գարնանային, արթնանալ, մկնդեղ

6 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1) արի-վեհերոտ, ողորկ-անհարթ
2) կարծրատիպ-ազատախոհ, թերի-ավարտուն
3) ծածուկ-բացեիբաց, խոնարհ-ամբարտավան
4) անխոհեմ-ողջախոհ, տնտեսել-շռայլել

7 **Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:**

1) **սնգույր**-երեսը ներկելու քսուք, **սուտակ**-թանկարժեք քար
2) **պատրվակ**-մտացածին պատճառ, **խոյակ**-քանդակազարդ սյունագլուխ
3) **ակնակապիճ**-աչքի խոռոչ, **դարձերես**-թղթի հակառակ կողմը
4) **կոնդակ**-կաթողիկոսի պաշտոնական գրություն, **խեժ**-կապույտին տվող կանաչ

8 **Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն ընդհանուր արմատ:**

1) անարգանք, արգանակ, մեծարգո
2) սիրասուն, սննդակարգ, անասնապահ
3) գետափնյա, գետնամած, գետաբերան
4) անակնկալ, ակնոց, բյուրակն

9 **Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված:**

1) **սիրտը կախ** - անտրամադիր
2) **լեզու առնել** – ուրիշին նմանակել
3) **ձեռնոց նետել** - մարտի հրավիրել
4) **թևի տակ առնել** - նեցուկ կանգնել

10 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) երկնագույն, լաջվարդ, լուրթ
2) իջևան, հանգրվան, օթևան
3) զավեշտ, ծաղր, հեգնանք
4) ամենևին, բնավ, երբեմն

11 **Ո՞րն է գերադրական աստիճանով դրված ածական:**

1) ամենատես
2) ամենագետ
3) ամենաճոխ
4) ամենակեր

12 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են անորոշ դերանուններ:**

1) ոմանք, այլ, որերորդ
2) մյուս, որոշ, որևիցե
3) այսինչ, երբևէ, ինչ-որ
4) մեկը, մի քանիսը, ով

13 **Ո՞ր տարբերակում նախադասության անդամի ձևաբանական վերլուծության սխալ *չկա:***

Աջ ու ձախ պտտեմ մի երրորդ կոճակ, Եվ մութը իսկույն հին չարքի նման Չքվի, չքանա:

1) ***չքանա*** – պարզ բայ, ***մի*** – անորոշ դերանուն
2) ***նման*** – կապ, հետադրություն, ***երրորդ*** – բաշխական թվական
3) ***չքվի*** – չեզոք սեռի բայ, ***իսկույն*** – վերաբերական
4) ***չարքի*** – գոյական, սեռական հոլով, ***պտտեմ*** – ըղձական ապառնի

14 **Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ *չկա:***

1) Նա նայեց վարից վեր՝ ձեռքով վախվորած մի բացասական շարժում անելով:
2) Հենվելով իր ձեռնափայտին՝ նա ոտքի ելավ ու դողդոջուն քայլերով մոտեցավ ինձ:
3) Ճանապարհը գնալով դժվարանցանելի էր դառնում:
4) Մինչև Արարատի ստորոտը նրանց ուղեկցում է զինավառված հայերի մի հոծ բազմություն:

15 **Ո՞ր շարքում են բոլորը անորոշ դերբայներ:**

1) հպարտանալ, խաղացել, դողացնել, խոցոտել
2) պարծենալ, հանգչել, կորցնել, չորանալ
3) ծիծաղել, ուրախացրել, ուռչել, պոկոտել
4) հասել, մոտեցնել, իմացվել, լինել

16 **Ընդգծվածներից ո՞րն է որոշիչ:**

1) <u>**Մեղմ**</u> ու սիրագին ժպտում էր նա ինձ Օտար կողմերում, այն ճամփի վրա:
2) <u>**Դժկամ**</u> նայում են ժայռերը խոժոռ, Տխուր խաղում են ալիքները ժիր:
3) Ես կգամ, երբ դու կլինես <u>**տրտում**</u>, Երբ երազներդ հավետ կմեռնեն:
4) Կանգնած եմ նորից <u>**ահեղ**</u> անտառում՝ Մութ ուղիների բաժանումի մոտ:

17 **Ո՞ր նախադասության մեջ հանգման անուղղակի խնդիր կա:**

1) Մերոնց վիշտը մերթ բոցավառվում էր որպես պայծառ հույս, մերթ դառնում մարմրող տկար կայծ:
2) Նրան մեծ պատիվներով ու շուքով ընդունեցին Աշոտ արքայազնի հոր՝ Գագիկի նստավայրում:
3) Քանի դեռ կա այսպիսի Մաքուր մի գետակ, Ձեր մաքրության հանդեսին Պիտի հավատաք:
4) Ժայռի կատարին փթթում է ճերմակազգեստ մասրենին:

18 **Ընդգծվածը նախադասության ի՞նչ անդամ է:**

Հատակից քար ես հանում,
*<u>**Մաքուր**</u> է այնքան,*
Քարից բուրմունք ես առնում
Կարմրախայտ ձկան:

1) որոշիչ
2) ձևի պարագա
3) ստորոգելի
4) ենթակա

19 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Այն միջոցին, երբ մեր հարևան հրեաների խանութները թալանում էին, երբ տներից դուրս ձգվող մանկական անկողինների բուրդն ու փետուրը քամու բերանում էին, կանանց ու երեխաների աղաղակն ու հեծկլտանքը լցրել էին օդը, մենք փակված էինք խանութում:

1)


2)


3)


4)


20 **Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարդի:**

1) *Քննադատության հանդեպ նրա արհամարհանքը առաջ էր եկել նախկինում անարդարացի ու աչառու քննադատության ենթարկվելուց:*
   Քննադատության հանդեպ նրա արհամարհանքն առաջ էր եկել նրանից, որ նախկինում անարդարացի ու աչառու քննադատության էր ենթարկվել:
2) *Թիֆլիսը սիրեց ինձ իմ ծննդավայրը մոռանալ տալու աստիճան:*
   Թիֆլիսը սիրեց ինձ այնքան, որ մոռացա իմ ծննդավայրը:
3) *Խնդրեցի մի նավաստու իրավիճակի մասին մի երկտող հասցնել հարազատներիս:*
   Խնդրեցի, որ մի նավաստի իրավիճակի մասին մի երկտող հասցնի հարազատներիս:
4) *Հեծյալների՝ Սահակ Սևադայի ապարանքին հասնելուց հետո իշխանը միայնակ առաջ անցավ:*
   Երբ հեծյալները հասնում էին Սահակ Սևադայի ապարանքին, իշխանը միայնակ առաջ անցավ:

21 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:**

Տանտերը(1) Օհան ապերը(2) նահապետական բարքով մի մարդ էր որի նման մարդիկ հիմա մեր գյուղերում այլևս չկան: Ձմեռը նստում էր սենյակի անկյունում(3) բուխարու մոտ(4) չոր փայտը դարսում կողքին փայտերը մեկ-մեկ գցում էր կրակի մեջ(5) պատմություններ անելով շահի ժամանակից(6) որսից և անտառից: Իսկ(7) եթե ոչ ոք չէր լսում նրան(8) մենակությունից(9) կամ ձանձրույթից բուխարու առաջ բաց էր անում շարականի գիրքը:

Տանը չորս հոգի էինք ես Օհան ապերը(10) նրա պառավ կինը և տասը տարեկան Աշոտը որ հավատարիմ ընկերս էր:

1) 3, 5, 7, 9, 10
2) 2, 4, 6, 8, 10
3) 3, 4, 6, 7, 9, 10
4) 1, 2, 4, 6, 8, 9

22 **Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):**

Հելիոսի նշանավոր արձանը ……. ՝ արձանամասերից յուրաքանչյուրը մյուսի վրա դնելով, և նրա մասին Փիլոն Բյուզանդացին գրել է, թե քանդակագործը անավարտ արձանի շուրջը քիչ-քիչ ……. հողի շերտեր՝ ……. ավարտված հարկերը և հնարավորություն ստեղծելով հաջորդ հարկերը ……. :

(1. տեղադրել, 2. կառուցել, 3. ծածկել, 4. լցնել)

1) 1, 3, 2, 4
2) 1, 2, 4, 3
3) 2, 4, 1, 3
4) 2, 4, 3, 1

23 **Տրված հատվածը ո՞ր հայերենով է շարադրված:**

Սրտիս դառնահեծ հառաչանքների
Վայն ու ողբաձայն աղաղակները
Վերընծայում եմ քեզ, ո՜վ գաղտնատես,
Եվ իմ սասանված մտքի ճենճերող
Իղձերի պտուղ նվերն այս դրած
Անձս տոչորող թախծի կրակին՝
Կամքիս բուրվառով առաքում եմ քեզ:

1) միջին հայերենով
2) գրաբարով
3) արևմտահայերենով
4) արևելահայերենով

24 **Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Շատ տարիներ գաղտնիքը մի սերնդից մյուսին էր փոխանցվում բանավոր ձևով, և միայն ոչ հեռու անցյալում է այն գրվել թղթի վրա: Փաստաթուղթը տեղում կիսվել է երկու մասի և պահպանման հանձնվել չհրկիզվող երկու տարբեր պահարաններում:
2. Հայտնի դեղամիջոցներից մեկը՝ անգոստուրիան, 1824 թվականից արտադրում է նույն գերդաստանը: Դառը նյութի դեղատոմսը և պատրաստման տեխնոլոգիան պահվում են խիստ գաղտնի:
3. Նրանք պարտավոր էին հանդիպել միայն դեղամիջոցի պատրաստման պահին, երբ պատրաստի արտադրանքի ստուգման համար մնում էր միավորել գաղտնի գիտելիքները:
4. Միայն չորս մարդ գիտեր գաղտնիքը, ընդ որում, նրանցից յուրաքանչյուրը տեղյակ էր գաղտնիքի միայն քառորդ մասին, և բոլորն ապրում էին տարբեր տեղերում: Միասին ոչ մի տեղ չէին գնում ո՛չ գնացքով, ո՛չ շոգենավով, ո՛չ էլ ինքնաթիռով:

1) 4, 2, 3, 1
2) 4, 2, 1, 3
3) 2, 4, 1, 3
4) 2, 4, 3, 1

25 **Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի հերոս Աբիսողոմ աղան համաձայնում է լուսանկարվել, երբ՝**

1) լուսանկարիչը խոստանում է ձրի նկարել:
2) իմանում է, որ ամեն մարդ պարտավոր է «իր պատկերը քաշել տալ»:
3) լուսանկարիչը, նկարագրելով իր ողբալի վիճակը, շարժում է նրա գութը:
4) պարզում է, որ միայն մեծ մարդիկ լուսանկար ունեն:

26 **Վ. Տերյանի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:**

Ու կարոտակեզ ահա կրկին
Վերադառնում եմ, որ առհավետ
Ունկնդիր լինեմ քո հին երգին
Եվ լամ, լամ անուշ քո երգի հետ:

1) «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի»
2) «Մի՞թե վերջին պոետն եմ ես»
3) «Իջնում է գիշերն անգութ ու մթին»
4) «Որպես Լաերտի որդին»

27 **Գ. Զոհրապի ո՞ր հերոսուհին է նորավեպի ավարտին դառնում «*…սևեր հագնող աղջիկ մը, որ չամուսնանար*»:**

1) Զարդարը
2) Վասիլիկը
3) Տիգրանուհին
4) Պերճուհին

28 **Ո՞ր պնդումն է ճիշտ Ա. Բակունցի «Միրհավ» պատմվածքի վերաբերյալ:**

1) Սոնայի ամուսնությունից հետո Դիլանը հեռանում է գյուղից:
2) Դիլան դային Սոնայի մահից հետո ամուսնանում է, բայց մինչև խոր ծերություն հիշում է Սոնային:
3) Սոնան ամուսնացել էր քաղաքից գյուղ եկած ուսուցչի հետ:
4) Անտառապահն ու Դիլանը մտերիմ ընկերներ էին և հաճախ էին միասին զբաղվում միրհավի որսով:

29 **Ինչո՞վ է ավարտվում Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը:**

1) Փայտակարան արշավելու և հոներին դիմագրավելու համար Հազկերտի՝ պարսից հազարապետին տված հրամանով
2) Ավարայրի դաշտից լսվող՝ Վարդանանց նվիրված «հին երգի» մեղեդու պատկերով
3) Եղիշեի՝ Ավարայրի դաշտում նահատակված հայ հերոսների անունների թվարկումով
4) Արտակ Մոկացի՝ պատերազմի դաշտում ընկած սիրելիների մասին հիշողություններով

30 **Մ. Մեծարենցի ո՞ր բանաստեղծությունից է մեջբերված հատվածը:**

Ջուրը ցայտքեն ծաղիկ ծաղիկ կը կաթե.
Վրճիտ, ինչպես լույսե արցունքը մանկան,
Նրվագն անոր կը հեծեծե հեշտական:

1) «Աքասիաներու շուքին տակ»
2) «Արևին»
3) «Վայրկյան»
4) «Սիրերգ» («Գիշերն անույշ է...»)

31 **Ո՞ր բառն է բաց թողած:**

.....սերունդների
Աչքն է դիպել լույս գագաթին
Ու անցել:

1) Աստանդական
2) Եղեռնապուրծ
3) Խուճապահար
4) Մահախուճապ

32 **«Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) վերաբերյալ ո՞ր պնդման մեջ սխալ կա:**

1) Մեծ Սիերը եղբայրներից միակն է, որ ժառանգում է հոր դյուցազնական ուժը և չափահաս դառնալուց հետո տիրություն անում իր երկրին ու ժողովրդին:
2) Որբացած Դավթին ուղարկում են Իսմիլ Խաթունի մոտ, բայց նա կարճ ժամանակ անց չի ընդունում վերջինիս կաթը և սնվում է Սասունից ուղարկված մեղրով ու կարագով:
3) Հեռանալով Բաղդադից՝ իրենց ճանապարհին Սանասարն ու Բաղդասարը տեսնում են մի բարակ, բայց զորեղ առու, որի ակունքի մոտ իրենց համար ամրոց են կառուցում:
4) Դավիթը ամուսնանում է Չմշկիկ Սուլթանի հետ, իսկ հետո, Ջենով Հովանից իմանալով Խանդութի գեղեցկության մասին, գնում է նրա մոտ և բազմաթիվ սխրագործություններ կատարելով՝ ամուսնանում վերջինիս հետ:

33 **Ո՞ր բառերում ածանցի հնչյունափոխություն կա:**

1. բնութագրական, 2. ծննդական, 3. միջնորմ, 4. քննաշրջան, 5. թաքստոց, 6. կառուցապատում, 7. ձկնաբուծարան, 8. նկարչություն

34 **Ո՞ր բառերն են միմյանց հոմանիշ:**

1. որոգայթ, 2. շառափ, 3. ծուղակ, 4. թակարդ, 5. կառափ, 6. վիհ, 7. ոլորան

35 **Ո՞ր շարքերում տրված խոսքի մասին *չպատկանող* բառ կա:**

1. յուրովի, այդչափ, դեսուդեն, քանիցս *(մակբայ)*
2. վերաբերյալ, առանց, միջև, օրոք *(կապ)*
3. ո՛չ, թե՛....թե՛, մինչդեռ, թեկուզ *(շաղկապ)*
4. ամբողջ, ամենուր, միմյանց, իրենք *(դերանուն)*

36 **Ո՞ր նախադասություններում բուն բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1. Մեր երեխաներիս աչքը չէր հեռանում նրանցից և ուշիուշով դիտում էինք արագիլների ամեն մի շարժում:
2. Այդ մի մատաղ և խարտյաշ եղնիկ էր սև ու ջինջ աչքերով որ ծածկվում էին երկայն նուրբ թարթիչների տակ:
3. Արդյոք գիտեր նա որ ինքը դողանջուն անտառների ազատ երեխան ծնվել ու մեծացել էր այդ խուլ անտառներում:
4. Մի գիշեր մի փոթորկոտ գիշեր սարերից անսանձ փչում էր քամին դուռն ու պատուհանները ծեծում:

37 **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցներն են գործածված:**

Երկինքն ու ծովը գրկել են իրար,
Մակույկն է սահում չգիտես թե ուր.
Իսկն ու երազը ճուլվել են իսպառ,
Ոչինչ չի տենչում իմ հոգին տխուր:

1. փոխաբերություն, 2. չափազանցություն, 3. հանգավորում, 4. համեմատություն, 5. շրջադասություն

38 **Ո՞ր նախադասություններում կետադրական սխալ կա:**

1. Մի օր էլ Լևոնը (տանը Լոլո էինք անվանում) իր դասընկերներին՝ յոթ-ութ տղաների, հավաքել էր մեր հյուրասրահում՝ զվարճանալու:
2. Լևոնը, բոցկլտացող աչքերը չռելով, որոտի նման պայթեց՝ ասելով, որ այս տան տերերից մեկը ինքն է, և ծառան իրավունք չունի խառնվելու:
3. Գոգոն ձայն-ծպտուն չհանեց ոչ թե նրա համար, որ չէր կարող պատասխանել, այլ լցվեց դառը վշտով. քառասուն տարի ծառայել է այս տանը, հենց իրեն՝ Լևոնին մեծացրել է իր թևերի վրա:
4. Մեղավորը հայրս է եղել. անձնագրային սեղանի մոտ կանգնած՝ նա մի պահ մոռանում է մորս ազգանունը և ստիպված՝ ասում առաջին մտացածին ազգանունը:

39 **Տրված բառերից քանիսո՞ւմ ուղղագրական սխալ կա:**

հոտնկայս, անհողդհողդ, երկորյակ, դիցուկ, գորգոռոց, գաղթագողի, կորնթարդ

40 **Տրված բառերից քանի՞սը կազմությամբ բարդածանցավոր *չեն:***

դավադրորեն, դարչնագույն, դեղամիջոց, արևելք, վիպասան, դասալիք

41 **Նախադասություններից քանիսո՞ւմ կապ կա:**

- Ըստ նորմանդական սովորության՝ նա միշտ շրջում էր՝ մի փոքր գդակ դրած:
- Մի վայրկյան տատանվելուց հետո նա մտավ քաղաք՝ մոլորված նայելով շուրջը:
- Զորականների պարագլուխները խորհրդակցում էին ապագա ճակատամարտի մասին:
- Նրա հայացքը արտահայտում էր խելացիություն՝ քնքշության հետ միախառնված:

42 **Տրված բառերից քանի՞սն են վերաբերական:**

անշուշտ, գեթ, իսպառ, փոքր-ինչ, արդյոք, իբր, սոսկ, անկասկած

43 **Նախադասություններից քանիսո՞ւմ է ընդգծվածը ենթակա:**

- Նրան **համոզելը** այդքան էլ հեշտ չէ:
- -**Թագուհի՛**, մի՞թե ինձ չես ճանաչում:
- Խաղի **կանոնները** պիտի հարգեն բոլորը:
- Մաշված դուռը դողդոջ երգում էր մի հին **երգ**:

44 **Նախադասության անդամներից քանիսի՞ շարահյուսական պաշտոնն է ճիշտ նշված:**

Խոնարհին մի քանի օր չէի տեսել, ու թվում էր՝ էլ չեմ տեսնելու, սակայն մի անգամ ևս նրան հանդիպելու ցանկությամբ կանգ առա նրանց տան առաջ և բաց դռնով նայեցի ներս:

- **Խոնարհին** – ուղիղ խնդիր
- **կանգ առա** – բաղադրյալ ստորոգյալ
- **բաց** – ձևի պարագա
- **տան** – հատկացուցիչ
- **նրան** – ուղիղ խնդիր
- **էլ** – ժամանակի պարագա

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Բայերը նախադասության մեջ միշտ դառնում են ստորոգյալ:
2. Նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերն են միայն գոյականը, ածականը, թվականը և դերանունը:
3. Շաղկապները նախադասության անդամ երբեմն դառնում են, երբեմն՝ ոչ:
4. Վերաբերականները արտահայտում են դատողական վերաբերմունք, իսկ ձայնարկությունները՝ զգացական:
5. Դիմավոր և անդեմ բայերին բնորոշ են եղանակի, ժամանակի և սեռի քերականական կարգերը:
6. Կան բառեր, որոնց խոսքիմասային պատկանելությունը նախադասությունից դուրս որոշելն անհնար է:

Բ մակարդակ

46 **Ո՞ր շարքում գաղտնավանկ ունեցող բառ կա:**

1) մաքրամաքուր, մանրակ, աստղալից
2) փափկասուն, անընչասեր, մատնաչափ
3) գեղեցկություն, ակնաբույժ, վերջնագիր
4) կապտերանգ, քաղցրասեր, խառնիխուռն

47 **Ո՞ր տարբերակում է տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված:**

1) ՊԿՋ-867
2) ՏՄՀԸ-4276
3) ՆԾԱ-451
4) ՌԾԽԳ-1943

48 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Ջրտու-ի(1) այդ գիշերներին լուսինը շող-(2) էր գցում առվի մեջ, ջրվորի պողպատ բահի վրա, արծաթ փայլով պսպղում էին սերկ-իլի(3) տերևները, հովից հասկերը քսվում էին իրար, խ-ում(4): Լուսաբացին հալվում էին աստղերը ձյունի գնդերի պես, շառագունում էր արևելքը, արևի առա-ին(5) շողերը խաղում էին ականակի-(6) ամպերի հետ, ասես մի անտես ձեռք բ-ր(7) շողերով ամպի սպիտակ քուլաների վրա հազարավոր նա-շեր(8) էր նկարում, որ մի քիչ հետո ավերի նույն շողերով:

Արևի շողերի հետ գոլո-շի(9) էր բարձրանում արտերից, ու գիշերվա խոնավությունն էր ան-անում(10):

1) 1-ք, 5-ջ, 8-ղ, 9-ր
2) 3-և, 4-շշ, 7-յու, 9-ր
3) 1-ք, 2-ք, 6-թ, 10-է
4) 2-ք, 7-յու, 8-ղ, 10-է

49 **Ո՞ր շարքի բոլոր բառերում *ի* ձայնավորի հնչյունափոխություն կա:**

1) մարդկային, վիպագիր, ընչաքաղց, պատանյակ
2) դիտակետ, մրգառատ, հոգյակ, փոշոտվել
3) երկրաբան, տարկետում, այգեպան, թվական
4) ձգան, կարմրաթուշ, սրտամոտ, անկողնային

50 **Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ *չեն:***

1) **ակնարկ** նետել–**ակնարկ** տպագրել
2) գետի **ափ**–ձեռքի **ափ**
3) մշակութային **գանձ**–թաքցրած **գանձ**
4) **շահ** ստանալ–պարսից **շահ**

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:**

1) քաղաք, երիտասարդ, ամրակ
2) եղեգն, խոժոռ, կանոն
3) գրպան, թզուկ, կանաչ
4) դշխո, փափուկ, աղիք

52 **Փակագծերում տրվածներից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

ա. Ես հիմա (1. հարյուրտոկոսանոց, 2. հարյուր տոկոսով) համոզված եմ, որ կարող եմ բոլոր դժվարությունները հաղթահարել:
բ. Պատերազմի (1. հրաձիգները, 2. հրձիգները) շարունակում են աշխարհի տարբեր անկյուններում «ահաբեկչության» դեմ պայքարել՝ ծածկելով իրենց նավթային շահերը:
գ. Զինծառայողները դիմադրություն (1. չեն գործել, 2. ցույց չեն տվել):
դ. ՀՀ-ում հայերենը (1. պաշտպանված, 2. պահպանված) է օրենքով:

1) ա-2, բ-2, գ-1, դ-1
2) ա-1, բ-2, գ-2, դ-2
3) ա-2, բ-2, գ-2, դ-1
4) ա-1, բ-1, գ-1, դ-2

53 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:**

1) ուղեցույց, որդեգիր, կաթնասուն, մեներգ
2) նավավար, հետախույզ, անցաթուղթ, սառցահատ
3) օրապահ, ջերմաչափ, գրաբեր, պատճեն
4) հանքափոր, արքայադուստր, սրունք, վիրաբույժ

54 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են *ա* խոնարհման:**

1) մռնչում են, մուրում են, հոգացել են
2) որսացե՛ք, տենչում էինք, ծիծաղող
3) ողբացին, կաղում էր, առավ
4) դարձել է, կորան, մոռացե՛ք

55 **Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:**

1) Ալխոյին թվաց, թե ինքը ձորից զառիվերով բարձրացել է:
2) Օտարերկրացիները միայն մեր Մատենադարանում կարող են տեսնել իրենց հեղինակների կորած բնագրերի հնագույն թարգմանությունները:
3) Մնացողները կծիկ են դառնում Թրջվելու վախից Եվ կամաց-կամաց բներն են քաշվում:
4) Նախորդ դարերում այստեղ-այնտեղ առկայծած որմնանկարչությունը փթթեց Տաթևում և Անիի տաճարներում:

56 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ա* ներքին հոլովման:**

1) հենապյուն, խաղատուն, գարուն
2) մտերմություն, շուն, դերանուն
3) անկյուն, ձյուն, կարկաչյուն
4) կեցություն, միացում, արյուն

57 **Ո՞ր նախադասության մեջ որոշիչ հողի գործածության սխալ կա:**

1) Ահագնաղողող ծափերը անմիջապես խախտեցին դահլիճի քար լռությունը:
2) Այդ պահին պարեկն եկավ իշխանի մոտ և հաղորդեց թշնամու գալստյան մասին:
3) Սուրհանդակն շտապում էր ժամ առաջ հասնել ամրոց:
4) Իմաստունն զգուշությամբ փակեց աչքերը և հրաժեշտ տվեց կյանքին:

58 **Ո՞ր նախադասության մեջ թվականի փոխանվանական գործածություն *չկա:***

1) Այդ գյուղում ապրում էր հարյուր քսանյոթ մարդ. նրանցից քսանինը տղամարդիկ էին, մնացածը՝ կանայք ու երեխաներ:
2) Այդ գիտնականը թարգմանություններ էր անում հարյուր տասնչորս լեզվից, վարժ խոսում էր երեսունինը լեզվով, մասնակի տիրապետում տասնմեկին:
3) Երկրագնդում կան տասը հազար արհեստական ծովեր և լճեր, որոնց ընդհանուր տարածությունը մոտ հինգ հարյուր հազար քառակուսի կիլոմետր է:
4) Ներկայումս երկրի տարբեր անկյուններում աշխատում են երեսուն գիտարշավախմբեր, որոնցից տասներկուսը արտասահմանից են:

59 **Ո՞ր նախադասության մեջ միջոցի անուղղակի խնդիր կա:**

1) Բոլոր երկրներում մարդիկ սիրով են դիմավորում Նոր տարվա գալուստը:
2) Փերիները սարի գլխին հավաքվեցին գիշերով:
3) Վազում է Քրիստինեն պարտեզի կածաններով, ինչպես եղնիկը՝ անտառում:
4) Միջօրեին տաքանում է հողը, օդը հագենում է հողի ու արևի արբեցնող բուրմունքով:

60 **Ո՞ր տարբերակում բաղադրյալ ստորոգյալ *չկա:***

1) Թանապուրի տաք գոլորշին Գերանին առնում Եվ սյունն ի վար գլոր-գլոր Ուլունք էր դառնում:
2) Աղոթքս պարզ է և նրբահյուս, Մեռնողի վերջին կանչ, Հայտնվի՛ր որպես լույս արշալույս Իմ հոգուն մահատանջ:
3) Երևի բան է պատահել. Երևի տարիներն անսիրտ Իմ սրտի կրակը տարել, Տարել են ու հետ չեն բերել:
4) Այստեղ է լացել իմ մայրը Մորմոքն իր և իր օրորը, Այստեղ այնպես անծայր է Թախիծը և այնպես խոր է:

61 **Ո՞ր նախադասությունն է բայական անդեմ:**

1) Ցուրտ է դարձյալ, մութ՝ իմ ուղին, Սրտումս՝ մահ և աշուն:
2) Մութ հավերժության դառնությունն զգալ, Եվ թախծել անհուն, և անչար լինել:
3) Երազնե՛ր իմ անդարձ, ծաղիկնե՛ր իմ գարնան, Ի՞նչ կանչով ձեզ կանչեմ, ինչպե՞ս լամ ձեզ համար:
4) Ահա մեծ քաղաքի լքված ծայրամասերից մեկի թաղը:

62 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բուք պիտի դրվի:**

Այս արգահատելի մարդը(1) Հոհան եպիսկոպոսը ոչ միայն ագահ էր այլ նաև անինքնասեր: Պատահում էր(2) գնում էր թագավորի պալատ և իրեն պահում էր(3) ինչպես խեղկատակ(4) չամաչելով իր տարիքից և կոչումից: Չորեքթաթ վազելով(5) ծամածռություններ անելով ու կենդանիների ձայներ հանելով(6) ծիծաղեցնում էր թագավորին(7) ուղտի պես սողալով նրա ոտքերի առջև: Եվ ուղտի սապատի պես մեջքը ուռցրած(8) վազվզում էր սրահում ապա մոտենում թագավորին(9) կրկնում նրա խոսքերը:

1) 1, 5, 4, 6, 7, 8
2) 1, 2, 3, 4, 6, 9
3) 1, 2, 4, 6, 7, 8
4) 2, 3, 5, 7, 8, 9

63 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ** ***չկա:***

1) Կարելի է տպագրել նրա հոդվածը, որտեղ կա զարմանալի բանաստեղծական տողեր:
2) Այսօր կորոշենք՝ ինչպես պիտի ընթանա մեր հետագա գործողությունները:
3) Նա բացեց իր աշխարհը հույզերի, որ իրենից հետո կոչվեց և կոչվելու է իր իսկ անունով՝ դուրյանական:
4) Որպես բարոյական դաս՝ գրողի ստեղծագործություններում հիշատակվում է հայ փափկասուն տիկնայք:

64 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասության ստորադասի բնույթը ճիշտ նշված:**

1) Պատմաբան այդ տիկնոջը զարմացրեց այն, որ կրոնների վերաբերյալ այդքան խոր ու հիմնավոր գիտելիքներ ունեմ: *(ուղիղ խնդիր)*
2) Սարերում այնքան լուռ է, որ շշուկը մի կիլոմետր հեռավորությունից անգամ լսվում է: *(չափի պարագա)*
3) Վրաց թագավորը դիտմամբ ուշացել էր Գանձակում, որ մեր թագավորի հետ միասին նույն օրը մտնի Գարդման: *(պատճառի պարագա)*
4) Պետք չէ աջակցել նրան, ով արվեստի մեջ ընտրում է թույլ դիմադրության ճանապարհը: *(ենթակա)*

65 **Ո՞ր բառն է բաց թողած:**

Եվ երբ քարշ տվին դիակդ արնաքամ,
Որ նետեն քաղցած ոհմակներին կեր –
Մեր կյանքի հիմերն անդունդը ընկան
Եվ արնոտ միգում …….. են դեռ...

1) հեծեծում
2) խարխափում
3) բոցկլտում
4) ճարճատում

66 **Ո՞ր հատվածն է Պ. Սևակի «Վարք մեծաց» բանաստեղծությունից:**

1) Նա օտար հրի ճարակի դիմաց
   Մեր ինքնությունը կոփեց ու կռեց:
2) Նրանք ծնվում են իրենց ծնողի անօգնությունից,
   Որպեսզի դառնան նոր զորեղություն:
3) Նրանից առաջ կային աստվածներ՝
   Երկնքի, սիրո, պտղավորումի,
   Ինչպես փոթորկի, նաև… դպրության:
4) Սերում են նրանք և այն ծերուկից,
   Որ նախընտրում էր ապրել տակառում:

67 **Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Աշխարհում ամեն օր տասնյակ մարդիկ են մահանում օձերի խայթոցներից, որոնց ծանրության աստիճանը սովորաբար կախված է օձի տեսակից, տարվա եղանակից, օձի վերջին սնվելուց անցած ժամանակից, խայթոցի տեղակայումից, խորությունից ու քանակից: Առավել վտանգավոր են գլխի և պարանոցի շրջանում արված խայթոցները, որոնք վերին շնչուղիների այտուցման պատճառով հեղձուկ են առաջացնում: Համեմատաբար թեթև են ստորին հատվածների խայթոցները:

Օձերի կծելուց հետո մաշկի վրա մնում է վերին ծնոտի ատամնահետքը, որով կարելի է որոշել օձի թունավոր կամ ոչ թունավոր լինելը: Թունավոր օձը կծում է՝ թողնելով երկու մեծ և դրանց հաջորդող երկշարք մանր հետքեր: Ոչ թունավորները քառաշարք հետք են թողնում. ներսի երկայնակի շարքերը ուղիղ են լինում, դրսինը՝ կոր: Խայթվածի վիճակը շատ արագ վատանում է՝ հաճախ բերելով մահացու ելքի:

1. Խայթոցի ծանրությունը պայմանավորված է ոչ միայն օձի տեսակով, այլև մի շարք այլ հանգամանքներով, անգամ տարվա եղանակով:
2. Աշխարհում բազմաթիվ մարդիկ մահանում են թունավոր օձերի խայթոցներից. դրանց ելքը բացառապես մահացու է:
3. Առանձնակի ծանր ընթացք են ունենում պարանոցի, գլխի և ստորին վերջույթների խայթոցները, որոնք բերում են շնչառական օրգանների այտուցման և հեղձուկի:
4. Թունավոր օձերի վերին ատամնաշարի հետքերը երկայնակի են, քառաշարք կորերի տեսքով:

68 **Համարակալված բառերից որո՞նք են մակբայներ:**

Կանչում է <u>1. կրկին</u>, կանչում <u>2. անդադար</u>
Էն չքնաղ երկրի կարոտը <u>3. անքուն</u>,
Ու թևերն ահա փռած <u>4. տիրաբար</u>՝
Թռչում է հոգիս, թռչում դեպի տուն:
Ուր որ հայրենի օջախի <u>5. առաջ</u>
<u>6. Վաղո՜ւց</u> <u>7. կարոտով</u> սպասում են ինձ
Ու ձմռան <u>8. երկար</u> գիշերը նստած՝
Խոսում են Լոռու հին-հին քաջերից:

69 **Ո՞ր տարբերակներում է ընդգծվածը համառոտ նախադասություն:**

1. Մրրիկից հալածվող անձրևի շիթերը ճիպոտում էին նավապետի պղնձյա դեմքը, **սակայն ես, չգիտես ինչու, հանգիստ էի**:
2. Ամենուրեք երևաց բուսականություն, **որին կարոտել էին իմ աչքերը**:
3. Այսօր եթե ինձ հարցնեն, թե ինչ է հարստությունը, կասեմ, **որ դա անհոգ երիտասարդությունն է**:
4. Նավը հետ էր ցատկում, **կարծես շունչ էր առնում**, որպեսզի նորից դիմադրի զայրացած թշնամուն:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Ստորադասական բոլոր շաղկապները դրվում են ստորադաս նախադասության սկզբում:
2. Բարդ ստորադասական նախադասությունը կարող է լինել միաբաղադրիչ, երկբաղադրիչ, բազմաբաղադրիչ:
3. Ստորադաս նախադասությունը գերադասին կապող որոշ ստորադասական շաղկապներ կարող են զեղչվել:
4. Գերադաս և ստորադաս նախադասությունները իրարից կարող են անջատվել բութով:
5. Բաղադրիչ ստորադաս նախադասությունները կարող են իրար համադաս լինել:
6. Բոլոր բարդ ստորադասական նախադասությունները կարող են փոխակերպվել պարզի: